ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և Էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. մարտի 23-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Ռուբեն Սինոյան	Կոմիտեի փոխնախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 6-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **«Նիկարմ ՖԱ» ակումբի կողմից ներկայացված դիմումի քննարկում.**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Նիկարմ ՖԱ» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կարգապահական կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Նիկարմ-08» թիմին հանել Մ-14Բ առաջնությունից, «Նիկարմ ՖԱ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

2. **09/03/22թ. «Աչաջուր-09»-«Վաչիկ-09» (13Մ1024) խաղի մասին. Խաղը չի կայացել «Վաչիկ-09» թիմը չի ներկայացել խաղին:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վաչիկ» ՖԱ ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կարգապահական կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Վաչիկ-09»

թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, «Վաչիկ» ՖԱ ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

3. «Նոա ՖԱ ՀԿ» ակումբի կողմից ներկայացված դիմումի քննարկում.

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Նոա ՖԱ ՀԿ» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կարգապահական կանոնակարգի 44-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Նոա-06» թիմին հանել Մ-16Բ առաջնությունից, «Նոա ՖԱ ՀԿ» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի՝ 40.000 ՀՀ դրամի չափով:

4. 13/03/22թ. «Արարատ-Արմենիա-ֆզ»-«ՀՊՏՀ Երևան» (ՖԶ-ԲԽ2013) խաղին «ՀՊՏՀ Երևան» թիմի ֆուտբոլիստ Գոռ Սարգսյանի (N 9773) հեռացման մասին (Հայհոյելու համար):

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ՀՊՏՀ Երևան» թիմի ֆուտբոլիստ Գոռ Սարգսյանի (N 9773) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ կարգապահական կանոնակարգի 49-րդ հոդվածի 18-րդ կետով «ՀՊՏՀ Երևան» թիմի ֆուտբոլիստ Գոռ Սարգսյանին (N 9773) որակազրկել 2 խաղով «ՀՊՏՀ Երևան» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

<u>Հիշեցում՝</u>

Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

Նախագահ՝ Կարեն Հովհաննիսյան

Անդամ և քարտուղար՝ Հայկուհի Ռշտունի

Անդամներ՝ Բաբկեն Ղալոյան

Տիգրան Իսրաելյան

Արման Ալաբերքյան